



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Հայրապետական տնօրինութիւնք.

Կոնդակ յանուն Հոգեւոր Կառավարութեան Կարուց, որով լուծեալ եղև պատկն տաճկահայտակ Հայրապետի Գրիգորեան ընդ պոռնիկ կնոջն, տալով իրաւունս առն մտանելոյ ի նոր ամուսնութիւն. թ. 781:

— Յանուն Գեր. Փոխ. Թեմակալին Երեանայ Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսի, յաղաքս յանձն առնելոյ զգործակալութիւն Աշտարակայ և կողմանցն Ներսէս քահայի Գիւլնազարեան Աշտարակ գեղջ. թ. 787:

— Յանուն նոյն Արքեպիսկոպոսի, յաղաքս յաւելլոյ ի վերայ ռոճկի փոխանորդին Աղէքսանդրապոլու երկերիւր ռուբլիս. թ. 689:

— Յանուն նոյն Արքեպիս, որով հաստատին առաջարկեալ երեք անձինք ի պաշտաման հոգարարձութեան թեմական Հոգեւոր գպրանոցին Երեանայ. թ. 790:

— Յանուն Վ. Էճ. Կոնսիստորիային Հայոց Աստրախանի, որով պատուիրեցաւ թոյլ տալ նախկին կնոջն Շուշեցի Նիկողայոսի Յովհաննիսեան՝ Մարգարաի Կաղաչկեանց, մտանել ի նոր ամուսնութիւն. թ. 809:

— Յանուն Գեր. Փոխանորդին Հայոց Գանձակայ Տ. Ա. Նանիա եպոսի, որով ընկալաւ զմիամենայ արձակուրդ և զմի հարիւր ընդլի ճանապարհածախս ի գնալ ի հանքային ջերմուկս, ի գիւտ առողջութեան անձին. թ. 820:

— Յանուէն Ամեն. Պատրիարքին Հայոց Կ. Պոլսոյ Տ. Մա-
ղաքիա Արքեպսի., որով հաստատելով զվճիռ նախկին կոն-
դակի՝ որ վասն լուծման պսակի Յովհաննու Պարոնիկեան
Կ. Պոլսեցւոյ, թոյլ տայ նաեւ նախկին կնոջն նորա Մաքրուհ-
ւոյ մօտանել ի նոր ամուսնութիւն. թ. 828:

— Յանուէն նոյն Պատրիարքի, յաղագս ազատելոյ ի բա-
նադրանաց զբնակիչս նոր գեղջ Ռշտունեաց, զորս դատապար-
տեալ էր Կաթողիկոսական Տեղապահին Աթոռոյն Ախթամա-
րայ Տ. Արսէն վարդ. ի. թ. 830:

— Յանուէն Առաջնորդ. Տեղապահին Վանայ Գեր. Տ.
Սահակ եպսի. Բագրեանդեան, որով շնորհին իրաւունք տաձ-
կահպատակ կարգադուրկ Մկրտիչ քհն. Վարդանեան Դիւան
գեղջ քահանայադործել ի հայրենիս իւր. թ. 832:

— Յանուէն վարչութեան Ազգ. Կրօն. ժողովոյ Վանայ,
որով լուծանելով զպսակ Գրիգորի Տապաղեան ընդ կնոջն,
տան առաջնոյն իրաւունք վերստին ամուսնութեան՝ սլաք-
տաւորելով զնա խնամել զլուսնոտ կինն իւր. թ. 833:

— Յանուէն վանահօր Սանահնի վանուց Գեր. Տ. Գա-
րեգին եպսի. Սաթունեան, յաղագս ձեռնադրելոյ զգալիք
Յարութիւն Աթուլեանց Տփլիս քաղաքի յաստիճան աւագ
տարիաւագութեան. թ. 864:

— Յանուէն Առաջնորդին Հայոց Պարսկ. — Հնդկաստանի
Գեր. Տ. Սահակ Արքեպսի., յաղագս յատկացուցանելոյ «Գե-
որգ Քանանեան» ուսումնարանին գեախն ինչ ի կուսանաց անա-
պատէ՝ առ ի կառուցանել շինուածս վասն նոյն ուսումնարա-
նին. թ. 870:

— Յանուէն վիճակայնոց թեմին Զուգայի, որով հաստա-
տէ զկանոնս «Գէորգ Քանանեան» ուսումնարանին. թ. 871:

— Յանուէն Վիճ. Կոնսիստ. երեւանի, որով լուծանի
պսակ տաձկահպատակ Յարութիւնի Տ. Ներսիսեան ընդ կնոջն՝
Գիւլէի Սահակեան, տալով առն զիրաւունս վերստին ամուս-
նութեան. թ. 884:

— Յանուէն Հոգ. Կառավարութեան Կարուց, որով լու-
ծանի պսակ տաձկահպատակ Համբարձումայ Մահակի — Յով-

Հաննիսեան ընդ կնոջն՝ Շուշանիայ մահաւ Սարգսեան, տալով
աւել զիրաւունս վերստին ամուսնութեան. թ. 885:

— Յանուէն Գեր. Տ. Ղեոնդ եպսի. Յովակիմեան, որով
կարգի ի նախագահ վանական Կառավարութեան—Մայր
Աթոռոյ. թ. 894:

— Յանուէն Ամեն. Պատրիարքին Հայոց Կ. Պոլսոյ Տ. Մա-
ղաքիա Արքեպսի, որով մերժի լուծումն պատկի Մշեցի Յով-
հաննու Եղիայեան ընդ կնոջն՝ Վերգինեայ Մերկերեան.
թ. 906:

— Յանուէն Առաջնորդին Հայոց Աստրախանի. Գեր Տ.
Արիստակէս Արքեպսի, որով յղեցաւ սրուակ մի ս. միւռոն
ի պէտս եկեղեցեաց թեմին. թ. 918:

— Յանուէն Փոխ. Թեմակալին Երեանայ Գեր. Տ. Սուքիաս
Արքեպսի, որով թոյլատրեցաւ պատկն Ղեոնի Յարութիւնեան
ընդ օրիորդ Մարիամու Բարայեան. թ. 924:

— Յանուէն վանահօր Սեանայ վանուց Գեր. Տ. Սարգիս
եպսի. Փիլոյեան, յաղազս վերածելոյ յատիճան քահանա-
յութեան զսարկաւազ Տիգրանն Տ. Անտոնեանց՝ ի հովու-
թիւն Ժողովրդեանն Նուկրիանու քաղաքամասին Սղնախի.
թ. 926:

— Յանուէն Սինօղի ս. Էջմիածնի, յաղազս անպահանջ
թողլոյ զգումարն 51 բուրլեաց ի գին պտկասեալ իւղոյ և
պանրոյ, յղելոց ի Տ. Սինն վարդապետէ՝ ի գործակալութենէ
Նոր Բայեազիտի. թ. 928:

— Յանուէն նախանդամոյ Վիճ. Կոնստ. Վրաստ. և
Իմէրեթի Տ. Գարեգին վարդապետի, որով պատուիրեցաւ
վճարել երեք հարիւր բուրլի ի գին խողովակաց, զնելոց ի պէ-
տրս ս. Խաչ վանուցն Արգեաղու. թ. 977:

— Յանուէն Գեր. Տ. Գարեգին եպսի. Սաթուհեան ի
Սանահին, յաղազս տալոյ զշորս ատիճան զպրութեան և
զուրար Յակովբայ Բէժանեան Աղաբարեան. թ. 979:

— Յանուէն Սինօղի ս. Էջմիածնի, որով կարգի Սարգիս
Փոթէեան ի գործաւար վանական Կառավարութեան Մայր
Աթոռոյ. թ. 987:

— Յանոււն նոյն Սինօղի, որով պատուիրի առաջի առնել ի տնօրինութիւն Նորին Արքութեան զցուցակ անձանց, խնդրողաց զանաաեղիս ի Վաղարշապատ. թ. 988:

— Յանոււն Սինօղի ս. Էջմիածնի, որով ծանուցաւ մեկնումն Տ. Սահակ վարդ. Բաղդասարեան ի վիճակն Նուխույ ըստ կալուածական գործոց վանուցն ճալեթու. թ. 989:

— Յանոււն Վիճ. Կոնսիատ. Արցախայ, յաղագս տալոյ Տ. Սահակ վարդ. Բաղդասարեան 100 ռ. ճանապարհածախս ի գնալ ի Նուխի. թ. 990:

— Յանոււն գործակալին Վաղարշապատայ Տ. Սարգիս քհնյի, որով լուծանի պատկն բնակչի Նոր գեղջ գաւառին Ռշտունեաց՝ Յովհաննիսի Եղիազարեան, ընդ պռօնիկ կնոջն, տալով առնն զիրաւունս վերստին ամուսնութեան. թ. 1012:

— Յանոււն Պ. Կարապետի Կոստանեան, որով կարգի ի տեսուչ Հոգեւոր ճեմարանի Մայր Աթոռոյ. թ. 1014:

— Յանոււն Պ. Սուլիսանայ Սուլիսանեանց՝ երեցփոխանի ս. Յովհաննէս եկեղեցւոյն Գանձակայ, որով կարգեցաւ ի դանձապետ գանձանակադրամոց ս. Էջմիածնի. թ. 1044:

— Յանոււն վանահօր ս. Թադէոս առաքելոյ վանուցն Արապու, որով հրամայեցաւ նմա ըստ քաղ. գործոցն զիմել յԱռաջնորդարան Դավրիժոյ. թ. 1060:

— Յանոււն Հոգաբարձութեան Ներսիսեան Հոգ. զպրանոցի Տփլեաց, որով հաստատեցաւ որոշումն նորին վանատուչութեան կենսաթոշակի ուսուցիչ Գաբրիէլի Միրզոյեան. թ. 1061:

— Յանոււն Սինօղի ս. Էջմիածնի, ընդ որում յղեցաւ տոմսն 6000 բուրլեաց, կտակելոց ի հանգ. Գրիգորէ Անտոնեան Սերերբենիկեան ռումանահպատակի՝ յանոււն Հոգ. ճեմարանի Մ. Աթոռոյ. թ. 1071:

— Յանոււն Գեր. Առաջնորդին Եւրովիոյ Տ. Գէորգ եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ յայանել Մուշեղայ Քէշիշեան ի Վիլրպուլ, եթէ զրկեալ է նա յիրաւանց երրորդ ամուսնութեան. թ. 1076:

— Յանոււն Վանական Կառավարութեան Մայր Աթոռոյ, որով պատուիրեցաւ տալ Կոստանդին սարկաւազի, միաբանի Մայր Աթոռոյ, 350 բուրլիս՝ ի ծախս ուսման նորայ, որ ի համալսարանին Մոսկուայի. թ. 1077:

— Յանոււն Սինօդի ս. Էջմիածնի, որով հրամայեցաւ արձակել ի պաշտամանէ հաշուետեսութեան եկեղեցեաց թեմին Երեւնայ զՀայրապետ Մելիք—Թանգեան. թ. 1099:

— Յանոււն Աւագ Լուսարարի Մայր Տաճարի Գեր. Տ. Ղևոնդ եպսի., յաղագս վերածելոյ յաստիճան սարկաւազութեան զերկուս ուրարակիր միաբանս Մ. Աթոռոյ՝ զԽասհակ Տ. Ղազարեան և զՅարութիւն Մազսուդեան. թ. 1109:

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ յանոււն Տ. Մկրտիչ քահ. ի Տ. Յակովբեան նոր նախիջեանցոյ, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. թ. 814:

— Յանոււն Տ. Ներսէս քհն. Քաջբերունեան, Առաջնորդական Փոխանորդին Բայազետ քաղաքի Թուրքիոյ, որով շնորհեցան իրաւունք կրելոյ զծաղկեայ փիլոն. թ. 890:

Հայրապետական օրհնութիւնք եւ զոհոնակութիւնք.

Կոնդակ օրհնութեան և զոհոնակութեան յանոււն Բագուեցի ս. Երուանդայ Բուդաղեան, յաղագս նուիրելոյ նորա 5000 ռ. ի տրամադրութիւն Վեհ. Հայրապետի ի յիշատակ հանգուցեալ մօր իւրոյ. թ. 865:

— Օրհնութեան և զոհոնակութեան յանոււն Տիկին Վարդապետայ Քանանեան, յաղագս նուիրեալ 4000 ռ. գումարին՝ առ ի բանալ ի Զուղայ քաղաքի նոր ուսումնարան. թ. 883:

— Օրհնութեան և քաջալերութեան յանոււն Ժողո՝

վրդեան և ծխականաց ս. Յակովբ եկեղեցւոյ վան քաղաքի, յաղագս կառուցման նորոգ եկեղեցւոյ իւրեանց, որոց և շնորհեցաւ մասն ի նշխարաց ս. Յակովբայ ՄԺԲնայ Հայրապետին և յղեցաւ ընդ ձեռն Գեր. Տ. Սահակ եպս. ի Բագրեանդեան. թ. 901:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն մուկուարնակ Տիկ. Տիրուհւոյ Կար. Պապովեանց, յաղագս նուիրելոյ նորա 4000 ո. առ ի բանալ ուսումնարան մի ի Պարսկաստան. թ. 902:

— Յանուն պ. Յակովբայ Տիրանեան եքեղէր ի նոյն միտս. թ. 903:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Դանիելի Յունանեան, յաղագս նորոգելոյ նորա զՍառն աղբիւր՝ կոչեցեալ ակն Ջրոյ, որ մերձ ի վանս ս. Խաչի Ն. Նախիջևանի. թ. 905:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Թագուհւոյ Քիւրքեանց Երեանցւոյ, յաղագս կտակեալ զբամոցն որ վասն տպագրութեան հայերէն դասագրոց. թ. 1017:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Եւայի Տ. Յակոբեան Շուշեցւոյ, յաղագս կառուցանելոյ նորա ծախիւք իւրովք զնոր եկեղեցին ի Ղիլիշան աւանի. թ. 1018:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Նախագահուհւոյ Բարեգործ. Բնկ. Հայոց կանանց Աօխաբատի, յաղագս յղեալ հաշուեցուցակին. թ. 1020:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. վասակայ Մաղաթեան Երեանցւոյ, վասն աշխատութեան նորա ի վերայ Գեթսեմանի ուխտատեղոյն Երեանայ. թ. 1036:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Պետ. Խորհրդ. պ. Բեգլարայ Մաքտիրոսեան Ստեփանեանց, յաղագս նուիրելոյ նորա զբեան Մատենադարանի Մայր Աթոռոյ.

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Զաւահիրի Պետրոսեան Թայիրեանց Երեանցւոյ, որով առան

նմա իրաւունք յետ մահուան թաղել ատընթեր առն իւրոյ
Ներսիսի, ի գաւթի ս. Սարգիս եկեղեցւոյ Նրեանայ. թ. 1082:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն պ. Ղու-
կասու Յովհաննիսեան Գոյլով ի Քիչնէ, յաղագս նուի-
րաբերութեան նորա միոյ Զահի ի պէտս Մայր Տաճարի.
թ. 1093:



ՈՂԲԱՅՈՂ ԻՈՐԵՆԱՅԻՆ

Ի ՅԱՇՏԻՇԱՏ ԵՒ ՅՕՇԱԿԱՆ



Ո՞վ էր այն հարուստ փարթամ,
Որ Սթենայ ծովափէն գայր,
Բեռնաւորեալ նաւ շահաբեր,
Թանգար էր նա ճոխ գիտութեան,
Ամենարուեստ և թանկագին,
Մարդրիտ զոհար էր իւր վաճառ,
Զրի բաշխէր, ո՞վ որ խնդրէր,
Եւ փոխարէն չառնոյր ոչինչ:

Հրաւէր կարգայր նա բարձրագոյն.
Առէք, ասէր, կղերք Հայոց,
Առէք մանկունք ուսման կարօտ,
Գանձ անկապուտ է իմ վաճառ,
Ոչ որ կարէ հանել ձեզմէ:

Ո՞հ, ո՞վ լսեց նորա հրաւէր,
Եւ ո՞վ գնեց իւր մարդարիտ.
Աւանդ, ոչ որ և ոչ մի:
Որ փարթամ էր ամենաճոխ,
Զբաւորեալ աղքատացաւ: